ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

N07/16/1015-16
29.02.16թ.

0010, ք.Երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 2.
Հեռ.(011) 52-19-64.Ֆաքս (011) 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

Ձեր № 268-ի 2
Առ 23.02.2016թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր վերոնշալ գրության տեղեկացնում ենք, որ 2016թ. հունվարի 1-ից առ այսօր ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը ստացել է 13 էլեկտրոնային հարցում, որոնցից 11-ին տրվել է գրավոր, իսկ 2-ին՝ բանավոր պատասխան: Նշված հարցումները չեն մերժվել և/կամ վերահասցեագրվել:

Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկատվությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգի համաձայն ՀՀ ԷՊԲ նախարարության կայքը դիմողներին հնարավորություն ընձեռում է հարցումներ ուղարկել առցանց՝ պաշտոնական կայքի համապատասխան բաժնի միջոցով (http://minenergy.am/feedback):

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ ԷԲՊ նախարարության պաշտոնական կայքում դեռևս չի ստեղծվել «Հաճախակի տրվող հարցեր» բաժինը: Ներկայումս այդ ուղղությամբ աշխատանքներ են տարվում համապատասխան ծրագրավորող ընկերության հետ:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատարող՝ Շաքե Առաքելյան
Հեռ.՝ 011 52 88 48